

Սպինոզայի բարոյագիտութեան մէջ տեղ կը գրաւէ նաեւ՝ ազատութեան գաղափարը: Սպինոզայի համաձայն, ազատ է միայն այն, որ իր բնութեան անհրաժեշտութեամբ գոյութիւն ունի եւ իր վարմունքին ու արարքին միակ որոշողն է: Այլ խօսքով, միայն բացարձակ ու անվերջ էութիւնը, Աստուած (անշուշտ Սպինոզային հասկցած իմաստով), կրնայ բոլորովին ազատ ըլլալ: Բայց նաեւ մարդը, որպէս վերջաւոր արարած, իր բանականութեամբ ու ներհայեցողութեամբ (Intuition), ինչպէս նաեւ ձերբազատուելով անպատշաճ յոյզերէն, կրնայ աստուածային բնութեան հետ միանալ ու ազատ ու երջանիկ համարուիլ:

➤ 9.4. Լայբնից

Գերման փիլիսոփայ Լայբնից եղած է նաեւ՝ պատմաբան, բնագէտ (ֆիզիկոս), ուսողագէտ (մաթեմատիկոս) եւ դիւանագէտ, այս պատճառով ան ծա-նօթ է, որպէս ընդհանրական գիտնական կամ հանրագիտակ փիլիսոփայ: Լայբնիցի փիլիսոփայութեան կեդրոնական նիւթը մոնադներու ուսմունքն է, որով ան կը փորձեր լուծել բնագանցական հարցերը: *Մոնադները* (Monad) բնութիւնը կազմող սկզբնական, անբաժան, անձեւ, ինքնուրոյն ու անհատական տարրերն են, որոնք իրարու հետ իւրայատուկ կապ ունին եւ ներդաշնակութիւն մը կը յառաջացնեն: Լայբնիցի համաձայն, *մոնադներու* նախածրագրաւորումը կատարուած է Աստուծոյ կողմէ, որուն որպէս արդիւնք կը յառաջանայ յիշեալ ներդաշնակութիւնը:

Պահպանողական Լայբնից, առանց արգելքի կ'ընդունի Քրիստոնէութիւնը ու բարոյական արժէքները, կը ջատագովէ ամենաբարի ու ամենակարող Աստուծոյ գոյութիւնը եւ աստուածարդարացումը (Theodicy), կը նկարագրէ Աստուծոյ ստեղծած «կարելի կատարելագոյն աշխարհ»ը, կը մատնանշէ *չարին* աղբիւրը, կը խօսի մարդկային ազատութեան ու բանականութեան մասին, ինչպէս նաեւ կը մշակէ բարոյական փիլիսոփայութիւն մը, զոր կարելի է նաեւ կոչել՝ *բնագանցական կատարելագոյնացում* (Metaphysical Perfectionism): Այս շատ ճոխ բովանդակութեամբ Լայբնիցի գլխաւոր երկը, որ բազմաթիւ կարճ գրութիւններու (Essay) հաւաքածոյ մըն է, հրատարակուած՝ 1710 թուականին, կը կոչուի «*Աստուածարդարացում*» (Theodicy, ֆրնս. բնագիր՝ „Théodicée“):

Լայբնիցի համաձայն, բարոյական փիլիսոփայութիւնը (Moral Philosophy), մեծ մասամբ քննարկումն է աստուածային ստեղծագործութեան բարոյագիտութեան: Հոն առկայ է՝ *բարիի ու չարի* եւ *ճիշդի ու սխալի* սկզբունքը, որով կը ղեկավարուի աստուածային կամքը՝ աշխարհի ստեղծագործութեան ատեն: Լայբնիցի համաձայն, որովհետեւ Աստուած *ամենակատարեալն* է (իր ամենակարողութեամբ եւ ամենագիտութեամբ), ուրեմն ան ստեղծած է «*կարելի կատարելագոյն աշխարհ*»ը (կամ բոլոր կատարեալ աշխարհներէն, Ան ընտրած է՝ կատարելագոյնը): Լայբնից, նաեւ կը բնորոշէ «*կատարելութիւն*» („Perfection“) հասկացութիւնը, որպէս՝ գերագոյն աստիճանի վրայ գտնուող էութիւն, որմէ աւելի բարձրը չկայ եւ անկարելի է, որ ըլլայ: Այս իմաստով,